

ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ՑԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀՀ ԱՆ ՆՅԱՐԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերանայման ընթացքում հաշվի են առնվել նյարդաբանական հիվանդությունների ձևակերպումները, չափորոշիչները և անհրաժեշտության ու առկայության դեպքում ծանրության աստիճանի սանդղակների կիրառումը:

Ստորև բերված են մեկնաբանություններ ըստ համապատասխան կետերի:

Կետ 19. Առաջարկվում է ուղղել «ռեգիդ» բառը «ռիգիդ»-ով: Ավելացնել «ատաքսիա» «ակինետիկ-ռիգիդ սինդրոմ»-ից հետո: Քանի որ հետագա կետերում նշվում է ատաքսիան ներյոդեգեներատիվ հիվանդությունների խմբում, կարևոր է այն նշել նաև ուղեղանոթային հիվանդությունների խմբում, հաշվի առնելով, որ դա նույնպես հեմի- և պարապարեզների կամ ակինետիկոռիգիդ համախտանիշի պես դեզաբիլիտացնող վիճակ է:

Մկանային ուժի գնահատումը միայն «թեթև» և «խոր» տարբերակներով չի կարող համարվել վստահելի, և պարունակում է սուբյեկտիվության որոշակի բաղադրիչ: Առկա է մկանային ուժի քանակական գնահատման շատ պարզ և պրակտիկայում հեշտ կիրառվող սանդղակ (Նկար 1): 3)-րդ ենթակետը անիմաստ է, քանի որ 1)-ին ենթակետում արդեն նշվում է:

Նկար 1. MRC մկանային ուժի գնահատման սանդղակ.

ՄԻԱՎՈՐ	MRC մկանային ուժի սանդղակ (0-5)
5	Նորմալ մկանային ուժ
4	Ակտիվ շարժում, դիմադրությանը և գրավիտացիային հակառակ
3	Ակտիվ շարժում, գրավիտացիային հակառակ, բայց ոչ դիմադրությանը
2	Ակտիվ շարժումը հնարավոր է միայն, երբ գրավիտացիոն գործոնը հանվում է
1	Թրթռոց կամ չնչին կծկում
0	Մկանային կծկումը բացակայում է

Այս սանդղակի կիրառման դեպքում մկանային ուժը կգնահատվի քանակապես, այլ ոչ թե որակապես և տարբեր մասնագետների գնահատումների միջև տարբերությունը կհասցվի մինիմալի:

Առաջարկվում է խոր պարեզ համարել երեքից ցածր միավորները:

Կետ 20. Ավելացնել «ատաքսիա» «ակինետիկ-ռիգիդ սինդրոմ»-ից հետո: Վերջում ավելացնել «ներառյալ E53.8†»

Առաջարկվում է ցուցակում (կետ 20-ում կամ ցուցակի վերջում առանձին կետով) ավելացնել նաև նոր հիվանդություն՝ «Էպիլեպսիա (G40)» ռեֆրակտեր (դեղորայքակայուն) ձև հաճախակի գեներալիզացված տոնիկ-կլոնիկ նոպաներով, ԷԷԳ հաստատված:

VI. ենթագլուխը ենթադրում է միայն ԿՆՀ բորբոքային հիվանդություններ իր վերնագրում (G00-G09), սակայն սկսած 26-րդ կետից ներառված են նաև այլ նյարդաբանական հիվանդություններ: Առաջարկվում է վերնագիրը փոխել, կամ ընդհանրապես հանել և այս հատվածը միացնել V-րդ ենթագլխին:

Հաշվի առնելով, որ ընդհանուր առմամբ կետ 20-ը ընդգրկում է հիվանդությունների բավականին լայն խումբ, անհասկանալի է թե նրանք ինչու են առանձնացվում 26 կետից սկսած:

Առաջարկություններ.

26.1 կետը դառնում է 26

26.2 կետը դառնում է 27 – Կենտրոնական նյարդային համակարգի դեմիելինիզացնող հիվանդություններ (G35-G37)

Նախկին 28 և 29 կետերը ներառվում են կետ 27-ի մեջ

Նախկին 27 կետը դառնում է 28: Նախկին 27.1 և 27.2 ենթակետերը՝ նույն հիվանդությունն են

28. Բորբոքային պոլինեյրոպաթիա

28.1 Գլյեն-Բարեյի համախտանիշ (G61.0)

28.2 Խրոնիկ բորբոքային դեմիելինիզացնող պոլինեյրոպաթիա (G61.8)

Նախկին 30 դառնում է 29 և վերանվանվում «Ատաքսիաներ»

29. Ատաքսիաներ (G11.1 – 11.9)

30. Սպինալ մկանային ատրոֆիաներ և կապված համախտանիշներ (G12)

31. Էքստրապիրամիդալ շարժողական խանգարումներ

31.1 Պարկինսոնի հիվանդություն (G20) և երկրորդային պարկինսոնիզմ (G21 -22)

31.2-31.5 կետերը պահպանվում են նույնությամբ

31.6 Բազալ հանգույցների այլ դեգեներատիվ հիվանդություններ (G23)

32 կետը պահպանվում է նույնությամբ

33 կետից պետք է հանվեն 2-5 ենթակետերը: Քանի որ 2-րդ ենթակետը արդեն առկա է կետ 30-ի մեջ, իսկ 3 և 4 պետք է լինեն 34-ի մեջ (չճշտված բառը տեղին չէ): Կետ 34-ը պահպանվում է և անվանվում «Ողնուղեղի հիվանդություններ» (G95)

Այսինքն նախկին 33 կետի 1-ն ենթակետը կդառնա պարզ կետ 33

33.5 ենթակետը (միասթենիա, միոպաթիա) դուրս է բերվում որպես կետ 35

ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ Է

Ակինետիկ-ռիզիկ համախտանիշի ծանրության աստիճանը գնահատել Hoehn&Yahr սանդղակով:

ՀՅՈՒՆԻ ԵՎ ՅԱՐԻ ՍԱՆԴՂԱԿ (Hoehn&Yahr Scale)

0. Ասիմպտոմատիկ է:

1. Միայն միակողմանի ընդգրկում:

2. Երկկողմանի ընդգրկում առանց հավասարակշռության խանգարման:

3. Թեթև-միջին աստիճանի ընդգրկում: Որոշակի պոստուրալ անկայունություն, սակայն ֆիզիկապես անկախ է: Հրման փորձի ժամանակ օգնության կարիք ունի հրման թեստից դիրքը վերականգնելու համար:

4. Ծանր դեզաբիլիտացիա: Դեռ ունակ է առանց օգնության քայլելու կամ կանգնելու:

5. Գամված է սայլակին կամ մահճակալին, եթե օգնություն չցուցաբերվի:

Հյոնի և Յարի սանդղակով 4 և 5 միավոր ստացող անձնավորությունը համարվում է ծանր (արտահայտված) ակինետիկ-ռիզիկ համախտանիշ ունեցող:

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

Վ. ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

19. Գլխուղեղի և ողնուղեղի անոթային հիվանդություններ՝ արտահայտված ուղեղի կայուն օջախային խանգարմամբ (հեմիպլեգիա և պարապլեգիա, խոր հեմիպարեզներ և պարապարեզներ, տարածության և ժամանակի նկատմամբ կողմնորոշման խանգարում, ակինետիկ-ռիգիդ սինդրոմ, ատաքսիա G11.2-G11.9, R27.0)՝

1) ուղեղի արյան շրջանառության հեմոռագիկ, իշեմիկ կամ խառը սուր խանգարումներ (I60-I67).

2) 3-րդ աստիճանի դիսցիրկուլյատոր էնցեֆալոպաթիա՝ թուլամտությամբ (G93.4).

Ակինետիկ-ռիգիդ համախտանիշի ծանրության աստիճանը գնահատել
Hoehn&Yahr սանդղակով (**տես՝ Աղյուսակ 2**)

20. Կենտրոնական նյարդային համակարգի տարափոխիկ, դեմիելինիզացնող և դեգեներատիվ հիվանդություններ, որոնք ուղեկցվում են գլխուղեղի և ողնուղեղի օրգանական ախտահարմամբ՝ օրգանիզմի ֆունկցիայի խոր, կայուն խանգարումներով (ծանր կաթվածներ, խոր պարեզներ՝ զգայունակության տարածուն խանգարումներով, կոնքի օրգանների ֆունկցիայի խանգարումներով, տրոֆիկ խանգարումներով, արտահայտված ակինետիկ-ռիգիդ սինդրոմով, ատաքսիա G11.2-G11.9, R27.0) և պրոցեսի հարաճուն ընթացքով (G30-G37, ներառյալ E53.8*, G46.0*-G46.4*):

21. Թարախային մենինգիտներ (G00.9):

22. Մանրէային մենինգիտ՝ չճշտված (G00.9):

23. Մենինգիտ (G00.9)՝

1) թարախային (G00.9).

2) թարախածին (G00.9).

3) թարախակալված (G00.9):

24. Էնցեֆալիտ, միելիտ և էնցեֆալոմիելիտ (G04)՝

1) էնցեֆալիտ, միելիտ և էնցեֆալոմիելիտ՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ (G05*).

2) ներգանգային և ներողնաշարային արքցես (թարախակույտ) և գրանուլոմա՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ (G07*).

3) գլխուղեղի թարախակույտեր (G07*).

4) մենինգիտ՝ այլ դասերում դասակարգված մանրէային հիվանդությունների դեպքում (G01*).

5) մենինգիտ՝ այլ դասերում դասակարգված մանրէային հիվանդությունների դեպքում, ներառյալ՝

ա. նեյրոսիֆիլիաը (G01, (A52.1†).

բ. մենինգոկոկայինը (G01, A39.0†).

6) սպինալ-էպիդուրալ թարախակույտեր և ոչ տուբերկուլոզային էթիոլոգիայի գրանուլոմաներ (G06*):

25. Նյարդային համակարգի ախտահարում՝ տուբերկուլոզի դեպքում (A17.0† A17.8† (G01*, G05.0* G07*):

26. Նյարդային համակարգի ախտահարում՝ ՄԻԱՎ-ի դեպքում (B22.0 (G94.8*).

27. Կենտրոնական նյարդային համակարգի դեմիելինիզացնող հիվանդություններ, ցրված սկլերոզ, ցրված էնցեֆալոմիելիտ (G35-G37).
- Շարժողական ֆունկցիայի խանգարման դեպքում. մկանային ուժը գնահատվում է MRC սանդղակով (տես՝ Աղյուսակ 1)
 - Տեսողական ֆունկցիայի խանգարման դեպքում գնահատումը պետք է կատարվի ակնաբույժի կողմից
- ա .Լեյկոէնցեֆալիտ (G36.1):
- բ. Սուր և ենթասուր հեմոռագիկ լեյկոէնցեֆալիտ (Hurst) (G36.1):
28. Բորբոքային պոլինևրոպաթիա (G61)`
- 1) Գիյեն-Բարեի համախտանիշ (G61.0).
 - 2) Քրոնիկ բորբոքային դեմիելինիզացնող պոլինեյրոպաթիա (G61.8)
 - 3) այլ բորբոքային պոլինեյրոպաթիաներ (G61.8, G61.9):
29. Ժառանգական ատաքսիաներ (G11.2-11.9):
30. Սպինալ մկանային ատրոֆիաներ և կապված համախտանիշներ, կողմնային ամիոտրոֆիկ սկլերոզ (G12)
31. Էքստրապիրամիդալ շարժողական խանգարումներ (G20-G26)
- 1) Պարկինսոնի հիվանդություն (G20) և երկրորդային պարկինսոնիզմ (G21 -22)`
 - 2) հեպատոցերեբրալ դիստրոֆիա (հեպատոլենտիկուլյար դեգեներացիա, Վիլսոն-Կոնոլալովի հիվանդություն) (E83.0).
 - 3) Հանտինգտոնի հիվանդություն՝ ներառյալ Հանտինգտոնի խորեան (Huntington) (G10).
 - 4) դիստոնիա (գեներալիզացված ձև) (G24).
 - 5) այլ էքստրապիրամիդալ հիվանդություններ՝ արտահայտված շարժողական խանգարումներով (G25):
 - 6) Բազալ հանգույցների այլ դեգեներատիվ հիվանդություններ (G23)
32. Կենտրոնական նյարդային համակարգի տրավմատիկ հիվանդություններ՝ արտահայտված ուղեղի օջախային ախտահարման կայուն երևույթներով (հեմիպլեգիաներ և պարապլեգիաներ, խոր հեմիպարեզներ և պարապարեզներ) (S06-S09, G81-G83):
33. Գլխուղեղի և ողնուղեղի ծավալային գոյացություններ (D33, C70-C72).
34. Ողնուղեղի հիվանդություններ (G95)` 3) սիրինգոմիելիա և սիրինգոբուլբիա (G95.0).
- 1) միելոպաթիա՝ այլ դասերում դասակարգված հիվանդությունների ժամանակ (G99.2*).
 - 2) առաջնային ողնուղեղային և ողնաշարային զարկերակի ճնշման (սեղմման) համախտանիշ (G99.2* (M47.0†).
 - 3) տոքսիկ և դիսմետաբոլիկ ախտահարումներ (G95.9):
 - 4) սիրինգոմիելիա և սիրինգոբուլբիա (G95.0).

5) վերտերրոգեն միելոպաթիա՝ շարժողական ֆունկցիայի արտահայտված խանգարումներով (G95.1-G95.2).

35. Նյարդամկանային հիվանդություններ (միասթենիա, միոպաթիա) (G70-G73)

36. Էպիլեպսիա (G40), ռեֆրակտեր (դեղորայքակայուն) ձև հաճախակի գեներալիզացված տոնիկ-կլոնիկ նոպաներով, ԷԷԳ հաստատված: Նոպաների հաճախության և ծանրության աստիճանը որոշել ըստ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018թ. հունվարի 29-ի N18-Ա/1 հավելվածի:

ՀԱՎԵԼՎԱԾ

Աղյուսակ 1. MRC մկանային ուժի գնահատման սանդղակ.

ՄԻԱՎՈՐ MRC մկանային ուժի սանդղակ (0-5)

5 Նորմալ մկանային ուժ


- 4 Ակտիվ շարժում, դիմադրությանը և գրավիտացիային հակառակ
- 3 Ակտիվ շարժում, գրավիտացիային հակառակ, բայց ոչ դիմադրությանը
- 2 Ակտիվ շարժումը հնարավոր է միայն, երբ գրավիտացիոն գործոնը հանվում է
- 1 Թրթռոց կամ չնչին կծկում
- 0 Մկանային կծկումը բացակայում է

Առաջարկվում է խոր պարեզ համարել երեքից ցածր միավորները:

Աղյուսակ 2. ՀՅՈՆԻ ԵՎ ՅԱՐԻ ՍԱՆԴՂԱԿ (Hoehn&Yahr Scale)

- 0. Ասիմպտոմատիկ է:
- 1. Միայն միակողմանի ընդգրկում:
- 2. Երկկողմանի ընդգրկում առանց հավասարակշռության խանգարման:
- 3. Թեթև-միջին աստիճանի ընգրկում: Որոշակի պոստուրալ անկայունություն, սակայն ֆիզիկապես անկախ է: Հրման փորձի ժամանակ օգնության կարիք ունի հրման թեստից դիրքը վերականգնելու համար:
- 4. Ծանր դեզաբիլիտացիա: Դեռ ունակ է առանց օգնության քայլելու կամ կանգնելու:
- 5. Գամված է սայլակին կամ մահճակալին, եթե օգնություն չցուցաբերվի:

Հյոնի և Յարի սանդղակով 4 և 5 միավոր ստացող անձնավորությունը համարվում է ծանր (արտահայտված) ակինետիկ-ռիգիդ համախտանիշ ունեցող:

Սամսոն Խաչատրյան 

ՀՀ ԱՆ նյարդաբանության գծով խորհրդատու

ՀՀ ԱՆ ԱԱԻ նյարդաբանության և նեյրովիրաբուժության ամբիոնի վարիչ